գույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Շվեդիայի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Հանս Գունար Ադենին և ՀՀ-ում Շվեդիայի պատվո հյուպատոս Էդիտ Խաչատրյանին:

Նորին Սրբությունը, ողջունելով Հայաստանում Շվեդիայի դեսպանի այցը Մայր Աթոռ, ուրախություն հայտնեց երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների խորացման առիթով: Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Շվեդիայում հայ համայնքի ու նրա հոգևոր կյանքի կազմակերպմանը, շնորհակալություն հայտնեց իշխանությունների կողմից նորակազմ համայնքին ցուցաբերվող աջակցության համար:

Նորանշանակ դեսպանն իր հերթին շնորհակալություն հայտնեց ընդունելության համար և հույս հայտնեց, որ երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները կնպաստեն հայ-շվեդական հարաբերությունների զարգացմանը տարբեր ոլորտներում:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը դեսպանին հաջողություն մաղթեց իր առաքելության մեջ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Նոյեմբերի 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի նախագահ Սերգեյ Իգնատևի գլխավորած պատվիրակությանը՝ կազմված ԱՊՀ երկրների կենտրոնական բանկերի պաշտոնյաներից:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկրների միջև առկա համագործակցության առիթով՝ հորդորելով պահպանել և առավել զորացնել այն բարեկամությունը և ավանդական կապերը, որոնք ձևավորվել են ժողովուրդների համատեղ ջանքերով:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը հաջողություն մաղթեց խմբի աշխատանքներին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՆԱՏԻ ՄԱՐՇԱԼԻՆ

Նոյեմբերի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լեհաստանի Հանրապետության Սենատի Մարշալ Բոգդան Բորուսևիչի գլխավորած պաշտոնական պատվիրակությանը՝ ՀՀ ԱԺ ներկայացուցիչների և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

«*Նման այցելությունները գալիս են նպաստելու մեր երկու ժողովուրդների և երկրների միջև հարաբերությունների սերտացմանը*»,- ընդգծեց Նորին Սրբությունը՝ անդրադառնալով երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը և երկու երկրների միջև ձևավորված համագործակցությանը: Ի դեմս Լեհաստանի Սենատի Մար-

շալի՝ Վեհափառ Հայրապետը նաև իր գնահատանքը հայտնեց Լեհաստանի Հանրապետության իշխանություններին՝ 2005 թվականին Լեհաստանի Սեյմում Հայոց Ցեղասպանության ճանաչման, ինչպես նաև հայ համայնքի հանդեպ մշտապես ցուցաբերվող ազնիվ ու բարյացակամ վերաբերմունքի համար: Նորին Սրբությունը նաև շնորհավորեց պրն Բորուսևիչին նոյեմբերի 11-ի՝ Լեհաստանի Անկախության օրվա առիթով՝ մաղթելով լեհ աստվածասեր ժողովրդին խաղաղ և բարօր կյանք:

Իր հերթին պրն Բորուսևիչը, խոսելով լեհ-հայկական դարավոր հարաբերությունների մասին, նշեց Լեհաստանի պատմության մեջ հայերի կարևոր ներդրման մասին: «Ճիշտ է, ներկայիս մեր հարաբերություններն այդչափ սերտ չեն, ինչպես անցյալում, սակայն համակրանքը Հայաստանի և հայերի հանդեպ պահպանվում է...: Մենք հոգևոր կապ ենք զգում հայ ժողովրդի հետ, ունենք նաև պատմական ընդհանրության գիտակցումը»,- նշեց Սենատի Մարշալը:

Հանդիպման ընթացքին Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ Լեհաստանում ապրող հայ համայնքի հոգևոր և եկեղեցական կյանքի կազմակերպման խնդրին: Այս առնչությամբ պրն Բորուսևիչը տեղեկացրեց, որ առաջիկայում Լեհաստանի իշխանությունները պաշտոնապես կգրանցեն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և համայնքը:

Հանդիպմանը խոսվեց նաև երկու ժողովուրդների կյանքում իրենց Եկեղեցիների կարևոր առաքելության մասին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱՆԱԴԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Նոյեմբերի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Կանադայի Համադաշնության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ռալֆ Լիսիշինին՝ տիկնոջ հետ (նստավայրը՝ Մոսկվա):

Նորին Սրբությունը, շնորհավորելով պրն Լիսիշինին դեսպանի պաշտոնում նշանակման առիթով, վստահություն հայտնեց, որ դեսպանը որոշապես պիտի նպաստի Հայաստանի և Կանադայի միջև հարաբերությունների սերտացմանը և տարբեր ոլորտներում առկա գործակցության առավել զորացմանը: Վեհափառ Հայրապետն ի դեմս դեսպանի նաև իր գնահատանքը հայտնեց Կանադայի իշխանություններին՝ հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի, ինչպես նաև Հայոց Ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար:

Հանդիպմանը խոսվեց նաև միջեկեղեցական հարաբերություններին և միջկրոնական երկխոսություններին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասնակցության և դերի մասին: Անդրադարձ կատարվեց տարածաշրջանում առկա խնդիրներին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Նոյեմբերի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն